ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԱԽԿԻՆ ԳՈՐԾԿՈՄԻ ՇԵՆՔԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐԿԻ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-18/77

ք. Տաշիր «____» օգոստոսի 2018 թ.

«ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար Է. Արշակյանի, որը գործում է Տաշիրի համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՀԻԴՐՈՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Վարդանյանի, որը գործում է «ՀԻԴՐՈՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Տաշիր համայնքի նախկին գործկոմի շենքի երկրորդ հարկի մասնակի վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 30 նոյեմբերի 2018թ.:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը

ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ

տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 13458360 (տասներեք միլիոն չորս հարյուր հիսունութ հազար երեք հարյուր վաթսուն) ՀՀ դրամ, որից 2243060 (երկու միլիոն երկու հարյուր քառասուներեք հազար վաթսուն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների

---

[1] *Պայմանագիրը «Գների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կերվել է համաձայնագիր:*

ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին

ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է _6_ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:[2]

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Տաշիրի համայնքապետարան	«ՀԻԴՐՈՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ՍՊԸ
ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94	ՀՀ Արարատի մարզ, ք. Մասիս,
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն	Արդյուն. հանգույց, Սայաթ-Նովայի փ. 32
Հ/Հ 900272101024	«Հայրիզնեսբանկ» ՓԲԸ, Մասիսի մ/ճ
ՀՎՀՀ 06954139	Հ/Հ 11500294360943
	ՀՎՀՀ 03801977
----------Է. Արշակյան	----------Գ. Վարդանյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

---

[2] *Սույն կետը հանվում է պայմանագրից եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

Հավելված թիվ 1
« » օգոստոսի 2018թ. կնքված
N ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-18/77
ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ[3]*

«ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԱԽԿԻՆ ԳՈՐԾԿՈՄԻ ՇԵՆՔԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐԿԻ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

NN ը/կ	Հիմնա-վորում	Աշխատանքի անվանումը	Չափ. միավ	Քանակ	1 միավ. ընդ.արժ. հազ.դր.	Ընդհա-նուր արժեքը հազ.դր.
1	2	3	4	5	6	7
		1. Քանդման աշխատանքներ				
1	46-40	Քարե պատերի քանդում	$մ^3$	0,8	25.47	20.37
2	23-227	Շին.աղբի հավաքում,տեղափոխում և բարձում ինքնաթափին	տն	3.80	0.60	2.28
3	Գ310-3	Շին.աղբի Տեղափոխում 3կմ	տն	3.80	1.43	5.42
		2.Հատակներ				
1	11-11.	Պեմզաբետոնե նախաշերտի կառուցում 40 մմ	$մ^3$	8.792	42.66	375.10
2	11-55	Ց/ավազային հարթեցուցիչ շերտ 20մմ հաստ.	100 $մ^2$	0.1900	110.84	21.06
3	13-221	Ջրամեկուսիչ շերտի իրականացումCR-68	$մ^2$	19.00	7.84	148.92
4	11-55 11-56	Ց/ավազային հարթեցուցիչ շերտ 30մմ հաստ.	100 $մ^2$	2.197	134.30	295.06
5	11-135	Հատակների կառուցում սալիկներից/Պրեսգրանիտե սալ /600*600/սոսինձ-5 մմ	100 $մ^2$	1.008	1596.88	1609.65
6	11-135	Կերամիկական սալիկներից հատակների կառուցում սոսինձ-4 մմ 330*330	100 $մ^2$	0.19	929.15	176.54
7	15-82	Պրեսգրանիտե շրիշակների կառուցում H=10սմ սոսինձի վրա	100$մ^2$	0.0837	1650.98	138.19
8	11-191	Լամինատե հատակների կառուցում-8 մմ հաստ/սպունգով և շրիշակներով/լավորակ	$մ^2$	99.9	6.02	601.13
9	15-82	Աստիճանների Ճակատների երեսպատում /Պրեսգրանիտե սալ /600*600/սոսինձ-4 մմ	100$մ^2$	0.054	1625.45	88.10
		3.Հարդարման աշխատանքներ				
1	15-247-1	Առաստաղի սվաղում գաջի շաղախով	100 $մ^2$	0.137	331.18	45.37
2	15-277-1	Շեպերի սվաղում գաջի շաղախով	100 $մ^2$	0.345	675.52	233.05
3	15-246-1	Պատերի սվաղում գաջի շաղախով բարելավված որակի/g	100 $մ^2$	5.2390	278.03	1456.62
4	15-256	Պատերի սվաղում g/ավազային շաղախով	100$մ^2$	0.9127	217.16	198.21
5	15-568	Պատերի և շեպերի յուղաներկում	100$մ^2$	0.3967	137.25	54.45
6	15-660	Պատերի ներկում լատեքսով լավորակի	100 $մ^2$	5.2390	149.20	781.67
7	15-661	Առաստաղների ներկում լատեքսով լավորակի	100 $մ^2$	2.007	165.72	332.60
8	15-82	Պատերի երեսապատում կերամիկա-կան սալիկներով 200*300 - սոսինձ-4մմ հաստ	100$մ^2$	0.861	844.43	727.05
9	4-85	Կախովի առաստաղի իրականացում	$մ^2$	187.0	9.45	1767.49

[3] *Ծավալաթերթ-նախահաշիվը հրապարակվում է ներառյալ ստաշխատանքների կատարման արժեքների*

		մետաղ կարկասի վրա ջրադիմացկուն գիպսա կարտոնով-12,5 մմ				
10	4-85	Կախովի առաստաղի իրականացում մետաղ կարկասի վրա պլաստմասե գունավոր	մ^2	19.0	9.04	171.75
11	ինֆ տեղ	Անկյունակների տեղադրում/սվաղի/	100գծմ	0.90	10.30	9.27
12	ինֆ տեղ	Պլաստմասե անկյունակների տեղադրում	100գծմ	0.33	16.92	5.58
		4,Բացվածքներ				
1	10-107	դռան տեղադրում ՄԴՖ - ից դուռ	մ^2	19.71	52.21	1029.1
2	ինֆ տեղ	Դռների պարագաներ	կ-տ	8.0	7.54	60.29
3	Շուկա	Ալյումինե դռան տեղադրում կաղնեգույն(հայկ պրոֆիլ4+4,/ 46 մմ հաստ	մ^2	7.35	48.85	359.1
4	Շուկա	Ալյումինե դռան տեղադրում թերմոկամրջով(հայկ պրոֆիլ4+4,/ 60 մմ հաստ,կաղնեգույն	մ^2	3.78	64.32	243.1
5	7-51.	Մետաղապլաստե պատուհանագոգերի տեղադրում	մ^2	6.68	3.88	25.9
6	Շուկա	Մետաղապլաստե պատուհանագոգերի տեղադրում /40 սմ լայնութ./կաղնեգույն տեղադրում /40 սմ լայնութ./կաղնեգույն	գմ	16.7	6.14	102.46
		5.Միջնորմներ				
1	8-140	Միջնորմների կառուցում 10 սմ հաստ. պեմզաբլոկից	մ^3	0.86	34.95	30.05
2	8-140	Միջնորմների կառուցում 20 սմ հաստ. պեմզաբլոկից	մ^3	19.46	27.54	536.02
3	8-140	Միջնորմների կառուցում 10 սմ հաստ. պեմզաբլոկից/խոռոչների շարվածք	մ^3	2.21	34.95	77.23
4	Շուկա	Ամրան Ա-1	տն	0.1478	539.17	79.69
5	11-11.	պեմզաբլոկի անցքերի լիցք բետոն Բ - 7.5	մ^3	2.2	38.42	84.52
6	6-170	Ե/բ միաձույլ բարավորի կառուցում Վ-15 բետոնից	մ^3	0.416	97.03	40.36
7	Շուկա	Ամրան Ա-1	տն	0.00918	539.17	4.95
8	Շուկա	Ամրան Ա-500c -12 մմ	տն	0.0336	528.49	17.76
9	6-145	Ե/բ միաձույլ երիզվածքի կառուցում Վ-15 բետոնից	մ^3	0.324	107.48	34.82
10	Շուկա	Ամրան Ա-1	տն	0.00468	539.17	2.52
11	Շուկա	Ամրան Ա-500c -12 մմ	տն	0.00984	528.49	5.20
		Ջրագծի ներքին տեղամաս				
1	16-260	Պոլիպրոպիլենային խողով..d=20 մմPN10	մ	18.0	3.33	59.85
4	16-260	Պոլիպրոպիլենային խողով..d=20 մմPN10 /տաք ջուր/	մ	5.0	3.75	18.74
5	16-134	Փականների տեղադրում d=20մմ	հատ	2.0	4.64	9.28
6	ե16-130	Լվացարանի ծորակ տեղադրում d=15մմ	հատ.	2.0	7.93	15.86
10	17-49	Խոհանոցակոնքի - խառնիչի տեղադրում	հատ	1.0	6.25	6.25
7	ե16-130	Զուգարանային ծորակի տեղադրում d=15մմ	հատ	2.0	5.49	10.97
10	Շուկա	կցամաս պտուտակով 20	հատ	10.0	1.46	14.61
17	Շուկա	Եռաբաշխիչ 50*20*50մմ	հատ	3.0	0.67	2.00
14	Շուկա	Եռաբաշխիչ 20*20*20	հատ	3.0	0.10	0.29
16	Շուկա	Արտուղղում d=20մմ	հատ	11.0	0.05	0.58
17	Շուկա	Արտուղղում d=20մմ ամրակով	հատ	4.0	0.06	0.25
26	Շուկա	Խառնիչների տեղադրման պանել	հատ	1.0	1.92	1.92
27	23-113	Անցքերի բացում պատերում	100հտ	0.04	46.51	1.86
29	16-40	Պողպատե պաշտպանիչ պատյան d =40մմ	մ	1.0	2.63	2.63

30	Շուկա	Չժանգոտվող ճկախողովակ d=15մմ	հատ	8.0	1.38	11.07
31	Շուկա	Խողովակների խամուտ	հատ	46.0	0.06	2.83
32	15-614	խողովակների յուղաներկում /2 անգամ/ /պաշտպանիչ պատյան/	100 մ^2	0.001	141.36	0.17
		Կոյուղագծի ներքին տեղամաս				
1	16-34	Պոլիվինիլքլորիդե խող.տեղադրում d=110մմ	մ	4.0	2.19	8.76
2	16-33	Պոլիվինիլքլորիդե խող.տեղադրում d=50մմ	մ	7.0	1.40	9.77
3	17-22	Լվացարանի տեղադրում ոտնակով	կ-տ	2.0	20.92	41.84
4	17-62	Զուքարակոնքի տեղադրում բաքիկով	կ-տ	2.0	35.62	71.24
5	17-22	Խոհանոցակոնքի 2 տեղ տեղադրում պահարանով	կ-տ	1.0	68.43	68.43
6	Շուկա	Եռաբաշխիչ 110*50*110	հատ	2.0	0.67	1.33
7	Շուկա	Եռաբաշխիչ 110*110*110	հատ	2.0	0.83	1.66
8	Շուկա	Եռաբաշխիչ 50*50*50	հատ	1.0	0.34	0.34
9	Շուկա	Ճկախողովակ զուքարակոնքի d=100 մմ	հատ	2.0	1.85	3.69
10	Շուկա	Արտուղղում 90 Ե d=100մմ	հատ	3.0	0.55	1.66
11	Շուկա	Արտուղղում 90 Ե d=50մմ/արժեք/	հատ	3.0	0.16	0.49
12	Շուկա	Ռետինե միջադիր	հատ	3.0	0.46	1.38
13	23-113	Անցքերի բացում պատերում	100հտ	0.03	46.51	1.40
14	Շուկա	Ճկախողովակ սիֆոնով d=50 մմ	հատ	3.0	2.12	6.36
15	Շուկա	Պլաստմասե շրջակապ	հատ	22.0	0.12	2.71
16	16-60	պողպ.խողովակի տեղ. d=159*4,5մմ պաշտ պատյան	մ	1.00	12.61	12.61
17	15-614	Խողովակների յուղաներկում 2 անգամ	100մ^2	0.0050	138.21	0.69
		Ջեռուցում				
1	16-260 k=0,5	Պոլիպրոպիլենային խողով..d=20 մմ PN10ալյումինե շերտով տաք ջրի համար	մ	136.0	3.75	509.73
2	16-261 k=0,5	Պոլիպրոպիլենային խողով..d=25 մմ PN10ալյումինե շերտով տաք ջրի համար	մ	58.0	3.45	199.96
3	16-262 k=0,5	Պոլիպրոպիլենային խողով. d=32մմ PN10ալյումինե շերտով տաք ջրի համար	մ	34.6	3.56	123.06
4	18-109	Ալյումինե մարտկոցների տեղադրում	էկմ	50.8	0.87	44.30
		H=350 մմ - 110 կկալ/ժամ	սեկց	201.0	5.94	1193.62
5	18-76	Գազի կաթսա - 35 կվտ /փակ այրման խցով պատի կախովի/	հատ	1.0	397.99	397.99
6	23-113	Անցքերի բացում պատերում	100հտ	0.06	580.32	34.82
7	23-111	Անցքերի բացում միջնորմներում	100հտ	0.02	291.46	5.83
8	23-116	Անցքերի բացում պատերում/կաթսայի/	100հտ	0.01	334.99	3.35
9	Շուկա	Անկյունակ պոլիպ. d =32մմ	հատ	10.0	0.18	1.80
10	Շուկա	Անկյունակ պոլիպ. d =25մմ	հատ	8.0	0.10	0.80
11	Շուկա	Անկյունակ պոլիպ. d =20մմ	հատ	42.0	0.05	2.20
12	16-134	Կարգավորող փականի տեղադր. d=20մմ	կ-տ	28.0	4.64	129.85
13	16-134	փականի տեղադր. d=32մմ	կ-տ	2.0	5.03	10.05
14	Շուկա	Եռաբաշխիչ 32/32/20մմ	հատ	6.0	0.16	0.96
15	Շուկա	Եռաբաշխիչ 32/25/20մմ	հատ	2.0	0.21	0.43
16	Շուկա	Եռաբաշխիչ 32/32/25մմ	հատ	2.0	0.18	0.37
17	Շուկա	Եռաբաշխիչ 25/20/20մմ	հատ	4.0	0.17	0.69
18	Շուկա	Եռաբաշխիչ 25/20/25մմ	հատ	16.0	0.20	3.15
19	Շուկա	Կցամաս 20 մմ	հատ	4.0	0.04	0.18
20	Շուկա	Կցամաս 25մմ	հատ	12.0	0.07	0.81
21	Շուկա	Կցամաս 32մմ	հատ	2.0	0.11	0.22
22	Շուկա	Մարտկոցների կախիչ	հատ	56.0	0.64	35.92
23	Շուկա	Խողովակների խամուտ 32/20	հատ	220.0	0.06	13.53
24	Շուկա	Ամերիկանկա 32(անցում)	հատ	2.0	2.77	5.54

25	18-229	Դատարկման ծորակ d=20մմ	հատ	2.0	1.84	3.68
26	18-229	օդահեռացման ծորակ d =15 մմ	կոմպլ	14.0	0.58	8.18
27	18-213	Ջրի մաքրման զտիչի տեղադրում d=32մմ	հատ	2.0	4.34	8.68
28	23-160	Բետոնե հատակի քանդում	$մ^3$	0.07	20.79	1.46
29	46-71	Բետոնե հատակի վերականգնում Վ-15 բետոնով	$մ^3$	0.07	150.84	10.56
30	16-39	պողպ.խողովակ d=40մմ պաշտ պատյան	մ	8.60	2.40	20.65
31	15-614	խողովակների /պաշտպանիչ պատյան/ յուղաներկում 2 անգամ	$100մ^2$	0.01	138.21	1.38
		Ներքին լուսավորություն				
1	8-603-1	Առաստաղային լուսատուի տեղադրում կախովի - 11 Վտ էկոնոմ	հատ	45.0	5.41	243.31
2	8-593-1	Առաստաղային լուսատուի տեղադրում	հատ	6.0	6.96	41.79
		9Վտ /կետային,ներկառուցվող/ էկոնոմ				
3	8-591-2	էլեկտրական անջատիչ միաստեղ միաբևեռ	հատ	2.0	1.59	3.17
4	8-591-2	էլեկտրական անջատիչ երկստեղ միաբևեռ	հատ	9.0	1.83	16.50
5	8-591-7	Երկբևեռ վարդակ UH~220Վ,Iգո3=16Ա	հատ	25.0	1.37	34.34
6	10-975-8	Տուփ բաժանարար	100հտ	0.25	140.87	35.22
7	10-975-8	Տուփ վարդակների և անջատիչների	100հտ	0.36	133.18	47.95
8	8-402-2	Հաղորդալարի անցկացում ՊՎՔ 2*2.5մմԱ	100 մ	1.66	55.73	92.52
9	8-402-2	Հաղորդալարի անցկացում ՊՎՔ 3*2.5մմԱ	100 մ	0.98	77.11	75.57
10	8-146-1	Մալուխի անցկացում 3*16մմԱ ՎՎԳ	100մ	0.40	270.83	108.33
11	8-402-2	Հաղորդալարի անցկացում ՊՎ-3 -մմԱ	100 մ	4.17	69.88	291.41
12	8-417-1	Պլաստմասե ճկախողովակ. d =16մմ	100 մ	1.70	105.28	178.98
13	8-562-1	Խմբային վահան /պլաստմասե արկղ/12 տեղանոց	հտ	1.0	6.88	6.88
14	8-525-3	Միաբևեռ ավտոմատ անջատիչ 60Ա	հտ	1.0	4.40	4.40
15	8-525-1	Միաբևեռ ավտոմատ անջատիչ 10 Ա	հատ	2.0	2.84	5.67
16	8-525-1	Միաբևեռ ավտոմատ անջատիչ 20 Ա	հատ	4.0	2.84	11.35
17	8-525-1	Միաբևեռ ավտոմատ անջատիչ 6 Ա	հատ	2.0	3.18	6.37
18	8-525-1	Դիֆերեն հոսանքի անջատիչ 10Ա	հատ	1.0	3.63	3.63
		Ընդամենը				**16372.7**
		20 % ԱԱՀ				**3274.5**
		Ընդամենը				*19647.2*

* Կապալառուն աշխատանքները կատարում է ք. Տաշիր հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Տաշիրի համայնքապետարան
ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900272101024
ՀՎՀՀ 06954139

-------------------Է. Արշակյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ՀԻԴՐՈՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ՍՊԸ
ՀՀ Արարատի մարզ, ք. Մասիս,
Արդյուն. հանգույց, Սայաթ-Նովայի փ. 32
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Մասիսի մ/ճ
Հ/Հ 11500294360943
ՀՎՀՀ 03801977

-------------------Գ. Վարդանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 2
« » օգոստոսի 2018թ. կնքված
N ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-18/77
ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
«ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԱԽԿԻՆ ԳՈՐԾԿՈՄԻ ՇԵՆՔԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐԿԻ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԱԽԿԻՆ ԳՈՐԾԿՈՄԻ ՇԵՆՔԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐԿԻ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրը	30 նոյեմբերի 2018թ.
ԸՆԴԱՄԵՆԸ		Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրը	30 նոյեմբերի 2018թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Տաշիրի համայնքապետարան
ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900272101024
ՀՎՀՀ 06954139

Է. Արշակյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ՀԻԴՐՈՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ՍՊԸ
ՀՀ Արարատի մարզ, ք. Մասիս,
Արդյուն. հանգույց, Սայաթ-Նովայի փ. 32
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Մասիսի մ/ճ
Հ/Հ 11500294360943
ՀՎՀՀ 03801977

Գ. Վարդանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա <<Սկիզբը>> սյունակում ժամկետի սկիզբը նշվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:*

Հավելված N 3
« » օգոստոսի 2018թ. կնքված
N ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-18/77
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի			
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Սույն պայմանագրի վճարման կարգը կսահմանվի տվյալ պայմանագրի անբաժանելի մասը կազմող լրացուցիչ համաձայնագրով՝ անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում:
1.	45611300	Տաշիր համայնքի նախկին գործկոմի շենքի երկրորդ հարկի մասնակի վերանորոգման աշխատանքներ	

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Տաշիրի համայնքապետարան
ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900272101024
ՀՎՀՀ 06954139

----------Է. Արշակյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ՀԻԴՐՈՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ՍՊԸ
ՀՀ Արարատի մարզ, ք. Մասիս,
Արդյուն. հանգույց, Սայաթ-Նովայի փ. 32
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Մասիսի մ/ճ
Հ/Հ 11500294360943
ՀՎՀՀ 03801977

----------Գ. Վարդանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 4
« » օգոստոսի 2018թ. կնքված
N ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-18/77
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« » օգոստոսի 2018թ. կնքված
N ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-18/77
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց	Ընդունեց
	հայտը նախագծած ներկայացուցիչ՝
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
_____	_____
ստորագրություն	ստորագրություն

Հավելված 9
«ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-18/77» ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի կատարման ապահովում)

ք.Տաշիր «15» Օգոստոսի 2018թ.

«Հիդրովերանորոգում» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Գևորգ Վարդանյանի, նույնականացման քարտ N 001376672, տրվ. 08.01.2013թ-ին 044-ի կողմից, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

Ընկերությունը մասնակցում է **ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի** (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ *ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-18/77* ծածկագրով գնման ընթացակարգին:

1.1 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.2 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի /այսուհետ՝ Պահանջագիր/ ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.4 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.5 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.6 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.7 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱԲՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև /14/ 11 /2018 թ. (Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան, իսկ պայմանագրով երաշխիքային ժամկետ սահմանված լինելու դեպքում՝ երաշխիքային ժամկետի ավարտին հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ):

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«Հիդրովերանորոգում» ՍՊԸ

Արարատի մարզ, ք.Մասիս, Արդյունաբերական հանգույց, Մայաթ-Նովայի թիվ 32

Հայբիզնեսբանկ ՓԲԸ Մասիսի մ/ճ , հ/հ 11500294360943, ՀՎՀՀ 03801977

"Հիդրովերանորոգում" ՍՊԸ տնօրեն՝ Գ.Վարդանյան

1. ՎՃԱՐՄԱՆՊԱՀԱՆՋԱԳԻՐՈ

(մասնակցության հայտի ապահովում)

2. Թիվ

3. Ներկայացմանամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն՝ "Հիդրովերանորոգում"ՍՊԸ

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ ՀայբիզնեսբանկՓԲԸՄասիսիմ/ճ

6. Վճարողիհաշվիհամարը՝ 11500294360943

7. Վճարողի ՀՎՀՀ՝ 03801977

8. Վճարողի ՀՇՄՀ՝

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ **ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան**

10. Շահառուի ՀՇՄՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ **06954139**

12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **ՀՀ ՖՆ գործառնական վարչություն**

13.Շահառուիհաշվիհամարը (հշ.N) **900272101024**

14.Գումարը (թվերովևբառերով)՝ 1 346 000 (Մեկ միլիոն երեք հարյուր քառասունվեց հազար)

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերովևբառերով)(նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերովևկոդով)՝ ՀՀ դրամ/ AMD

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ **(պայմանագրի կատարման ապահովման համար)**

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանցհամարները,պայմանագրիծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝

19. Վճարման պայմանները՝ **<ակցեպտավորված վճարում>**

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

22.ա. Շահառուիստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.Տ.	21.ա. Վճարողիստորագրությունները՝ /_____/ /_____/ 21.բ. Կ.Տ.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն 24.բ. /_____/ /ստորագրություն/ 20.գ. Կ.Տ. "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն 23.բ. /_____/ /ստորագրություն/ Կ.Տ. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.